ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2023/6

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՏՀԲՄԾ-2023/6, ԿՏՀԲՄԾ-2023/7, ԿՏՀԲՄԾ-2023/8 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«04» հունվար 2024 թվական ք. Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով՝ Լիլիթ Ալեքսանյանի, Տիգրան Ծատուրյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով, ***որոշեց.***

1. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2023/6, ԿՏՀԲՄԾ-2023/7, ԿՏՀԲՄԾ-2023/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված

մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ և 40-րդ կետերի պահանջներին:

2. «ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2023/6, ԿՏՀԲՄԾ-2023/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ և 40-րդ կետերի պահանջներին:

3. Մրցութային առաջարկների գնահատման նիստի օրը և ժամը նշանակել 2024 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 15:00-ին:

4. Մրցույթների հրապարակային վիճակահանության փուլին մասնակցության իրավունք ստացած կազմակերպությունների թվից վերջնական հաղթողին ընտրելու նպատակով հրապարակային վիճակահանությունն անցկացնել 2024 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 15:30-ին:

5. Սույն որոշումն ուղարկել մրցութային առաջարկներ ներկայացրած աուդիտորական կազմակերպությունների էլեկտրոնային փոստի հասցեներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Ալեքսանյան